Հավելված 3

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«01» սեպտեմբերի 2021 թ.

Կ.Տ.

«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) առաքելությունն է Հայաստանում ստեղծել մասնագիտական կրթության օրինակելի կառույց, որը թույլ կտա հայ երիտասարդներին ստանալ որակյալ մասնագիտական կրթություն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով, ինչպես նաև հնարավորություն տալ ուսումնառողներին հետագա կյանքում ինքնահաստատվել և դառնալ հաջողակ ձեռք բերած հմտությունների և կարողությունների շնորհիվ, որոնք կլինեն համահունչ աշխատաշուկայի պահանջներին և շարունակական զարգացումներին:

Հիմնադրամում որակի ապահովման քաղաքականությունը մշակվում և իրականացվում է՝ ելնելով Հիմնադրամի առաքելությունից, տեսլականից և ռազմավարությունից:

Օգտվելով մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներից ու հնարավորություններից՝ Հիմնադրամում որակի ապահովման գործընթացները միտված են ապահովելու ժամանակակից մասնագիտական կրթություն՝ համապատասխան աշխատաշուկայի պահանջներին:

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում կրթության որակի ներքին ապահովման գործընթացներն իրականցվում են «Միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթության մասին» օրենքի, Հիմնադրամի կանոնադրության և սույն քաղաքականության հիման վրա :

Հիմնադրամն ունի կրթության որակի պատասխանատու, որին նշանակում և ազատում է Հիմնադրամի տնօրենը՝համաձայն գործող աշխատանքային օրենսգրքի: Որակի ապահովման պատասխանատուն սերտորեն համագործակցում է Հիմնադրամում գործող բոլոր մասնագիտական բաժինների հետ :

Որակի ապահովման գործընթացներն իրականացնելիս Հիմնադրամը՝

1. Առաջնորդվում է փաստերի վրա հիմնված տեղեկատվությամբ:
2. Ուղղորդում է իր գործունեությունը կրթության որակի բարելավմանը:
3. Կարևորում է արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը կրթական գործընթացից:
4. Ներգրավում է ողջ անձնակազմին:
5. Ապահովում է հետադարձ կապ արտաքին շահակիցների հետ:
6. Պարբերաբար իրականացնում է կրթական գործունեության և առանձին գործընթացների մշտադիտարկում, ներքին աուդիտներ և այլն:

Որակի ապահովման պատասխանատուի գործառույթներն են՝

1. Որակի ապահովման համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր, նախաձեռնել համապատասխան գործընթացներ:
2. Ապահովել հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների և տնօրենության առջև:
3. Ապահովել որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը:
4. Ձևավորել նախադրյալներ և մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար:
5. Ապահովել հաստատության կրթական ծրագրերի որակն այնպես, որ այն բավարարի բոլոր շահակիցների կարիքները:
6. Նպաստել ուսանողների՝ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող գիտելիքներ և հմտություններ ստանալուն:
7. Իրականացնել ուսամնասիրություններ որակի ապահովման բնագավառում արտասահմանյան գործընկերների հետ:
8. Օժանդակել հաստատության ինստիտուցիոնալ ինքնավերլուծության իրականացմանը:

Որակի ապահովման ուսանողական հանձնաժողով

Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի կազմն ընտրվում է ուսանողական խորհրդի անդամներից: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են ներկայացուցիչներ հաստատությունում գործող բոլոր բաժիններից:

Ուսանողական հանձնաժողովի գործառույթներն են՝

1. Գնահատել ուսանողների տեղեկացվածությունը իրենց իրավունքներից ու պարտականություններից:
2. Կազմակերպել ուսանողական քննարկումներ կրթության որակին խոչընդոտող հարցերի շուրջ:
3. Իրականացնել տվյալների հավաքագրում:
4. Կազմակերպել և իրականացնել SWOT վերլուծություններ:
5. Որակի ապահովման կենտրոնին ներկայացնել եզրակացություններ և առաջարկություններ:

Վերանայում

Որակի ապահովման համակարգի վերանայումը նպատակ է հետապնդում բարելավել և զարգացնել Հիմնադրամում ներդրված համակարգը, ինչը ենթադրում է գործունեության ծավալում՝ համահունչ Հիմնադրամի առաքելությանը:

Յուրաքանչյուր 4 տարին մեկ, նոր ռազմավարական ծրագրի կազմմանն ընդառաջ իրականացվում է որակի ապահառվման ամբողջական համակարգի վերանայում, ինչն իրենից ենթադրում է որակի ապահովմանն առնչվող փաստաթղթերի, որակի ապահովմանն ուղղությամբ տարվող աշխատանքների վերանայում և փոփոխում:

Սակայն, ելնելով անհրաժեշտությունից, կարող են իրականացվել նաև ընթացիկ վերանայումներ:

Վերանայման գործընթացի համար հիմք են հանդիսանում հարցումների, վերլուծությունների, մշտադիտարկման արդյունքները և հաշվետվությունները:

Վերանայման գործընթացները նախապես պլանավորվում են, իսկ ավարտին՝ գնահատվում:

Վերանայման արդյունքում կարող են չեղարկվել ամբողջական փաստաթղթեր, կարող են կատարել որոշ կետերի ամբողջական կամ մասնակի փոփոխություններ:

Փաստաթուղթն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: